

Սարատովկա

Մակերես՝ 22,23կմ²

Բնակչություն՝ 483

Տնային տնտեսությունների թիվը՝ 119:

Համայնքի կազմում են ընդգրկված են Սարատովկա և Գետավան (նախկինում՝ Ղըզղալա) գյուղերը:

Սարատովկա գյուղը գտնվում է Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 6կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից 46կմ հեռավորության վրա: Գյուղը հիմնադրվել է 1910թ.-ին Եկատերինա երկրորդի ժամանակ աքսորված մալականների կողմից: Բոգդանով ազգանունով մի մարդ բնակություն է հաստատել այդ տարածքում, զբաղվել անասնապահությամբ եւ այդ մասը անվանել են Բոգդանով խուտոր: Հետզհետե մոտակա գյուղերից եկել և բնակություն են հաստատել այստեղ և գյուղը անվանվել է Սարատովկա:

Բարձրությունը ծովի մակարդակից 1490 մետր: Կլիման բարեխառն լեռնային է, տևական ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը՝ 600-700 մմ:

Գյուղի միջով անցնում է Տաշիր գետը: Գյուղի միջով է անցնում Երեւան-Թբիլիսի մայրուղին:

Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1852,4 հա, որից՝ 397,8 հա վարելահող, 601,5 հա խոտհարք, 682,5 հա արոտ: Գյուղի մասնագիտացման հիմնական ուղղությունը անասնապահությունն է: Արոտավայրերի և խոտհարքների առկայությունը նպաստավոր է անասնապահության զարգացման համար:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են խմելու ջրագծերի ներքին ցանցի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, Գետավան գյուղի ակումբի վերանորոգումը :